Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ ՀՀ ԿԳՄՄՆ <<Գյումրու N45 միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ի կենսաբանության /17 դասաժամ/ ուսուցչի թափուր տեղի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՄՆ կողմից մշակված հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

1. Գրավոր դիմում /Ձև 1/,
2. Մեկ լուսանկար՝ 3X4 չափի,
3. Բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ /դիպլոմ/,
4. Անձը հաստատող փաստաթուղթ,
5. <<Հանրակրթության մասին>> ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը՝ առկայության դեպքում,
6. Ինքնակենսագրություն /Ձև5/,
7. Այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
8. ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինգրքույկ,
9. Հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր /առկայության դեպքում/,
10. Որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը ներկայացված փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ, ինչից հետո բնօրինակները վերադարձնում է մասնակցին: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել թերությունները և համալրել անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը:

Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից՝ **2024թ. նոյեմբերի 19-ից** մինչև **դեկտեմբերի 02-ը** ներառյալ ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը բացի շաբաթ, կիրակի և ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա **2024թ. դեկտեմբերի 05–ին՝ ժամը 15:00-ին**, Շիրակի մարզի, Գյումրու N45 միջնակարգ դպրոցում :

Հասցեն՝ ք. Գյումրի, Այգաբաց 3-րդ շարք, թիվ 36:

Տեղեկությունների համար զանգահարել՝ /0312/ 4-17-70 հեռախոսահամարով: